

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

Ա. ԹՈՔԱԽՏԻ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՄԻՋՈՑ

Պարիզի և Լօնդօնի լրագիրները հաղորդում են, որ մայիսի 24 ին (ն. տ.) «Տուբէրկուլեօզի միջազգային ընկերութեան» մէջ կարդացուեց երկու նշանաւոր բժիշկների զեկուցումը—դր. Բէրնհայմի (տուբէրկուլեօզի դէմ կռուելու ընկերութեան նախագահի) և դր. Դիէպարտի, (Սէն-դընիի տուբէրկուլեօզների հիւանդանոցի գլխաւոր բժշկի)—տուբէրկուլեօզը բժշկելու նոր միջոցի մասին: Հեղինակը—Բուդապէշտի պրօֆէսսոր Սցէնդէտտին երկու տարուայ ընթացքում փորձեր է կատարել այդ դեղով իր հիւանդանոցում ծովախոզերի, ճագարների և այլ կենդանիների վրայ, որոնց արհեստապէս պատուաստել է տուբէրկուլեօզը: Հէնց որ նա համոզուեց թէ նոր դեղը անփնաս է և բարեբեր ազդեցութիւն է անում հիւանդութեան վրայ, որոշեց փորձել հիւանդների վրայ: Այս մասին առաջին փորձերը այնպէս խրախուսեցին նրան, որ նա իր միջոցը առաջարկեց փորձել լայն չափերով Պարիզի տուբէրկուլեօզեան ապաստանարաններում: Ինչը բժիշկ Բէրնհայմին գլուխ ունենալով, զանազան տեղերում և միմեանցից անկախ փորձեր արին այդ դեղով և այն եզրակացութեան եկան, որ այդ դեղը անփնաս և իսկական միջոց է տուբէրկուլեօզի դէմ:

Նոր դեղը կոչւում է dioradin և է մանիշի, մէնտօլի և բադիի աղերի միաւորութիւն—iode-menthole-radio-actif.

Յայտնի է, որ ծովային օդը, որ մեծ քանակութեամբ

մանիշ է պարունակում իր մէջ, խիստ օգտակար է թոյլ թոքեր ունեցող մարդկանց համար: Այստեղից ենթադրեցին, որ մանիշը անմիջական կերպով ներմուծելով յօրինուածքի մէջ, օր. ներարկումով, աւելի լաւ ազդեցութիւն կարող էր ունենալ: Բայց այս միջոցը, չնայելով որ բարեբեր ազդեցութիւն էր անում ֆնասուած հիւսուածքների վրայ, թողին, որովհետեւ այդպիսի ներարկումները ցաւաբեր էին:

Պրօֆ. Սցէնդէտտին իր դեղի մէջ ուժեղացրեց մանիշի ներգործութիւնը րադիի ազդեցութեամբ, մանաւանդ որ վերջինս շատ խիստ է ազդում քիչ քանակութեամբ գործածելիս: Աւելացրեց նաև մէնտոլ, որի հակազդեցիկ ներգործութիւնը կօխի բացիլներէ վրայ վաղուց յայտնի է բժշկականութեան մէջ: Ստացուեց այսպիսի քիմիական բաղադրութիւն. — պէպտօնացրած մանիշ 0, 75

մէնտոլ 0, 06

րադիի աղեր 0, 0001 հզր. գր.

Այս բոլորը լուծուում է եթերի մէջ և սրսկւում կաշուի տակ ամեն օր մէկ-երկու ամիս շարունակ փոքր ընդամիջումներով: Խիստ քիչ բացառութիւններով այսպիսի սրսկումները ցաւեր չեն պատճառում:

Բէրնհայմի և Դիէպարտի զեկուցումը յայտարարեց 75 աւելի հետաքրքրական դէպքեր, երբ այդ նոր միջոցով բժշկուել էին թոքախտաւոր հիւանդներ: Այս հիւանդները յաճախ դտնուում էին ամենազարհուրելի պայմաններում սննդի և ընտանեկան կացութեան կողմից, և այնուամենայնիւ նրանցից 80 տոկոսին տուբէրկուլեօզի գործունէութիւնը իսպառ դադարեց, իսկ մնացածների ընդհանուր գրութեան մէջ զգալի բարելաւութիւն նկատուեց: Մարմնի կշիռը աւելացաւ, ջերմը կտրուեց, խորիւր մէջ բացիլների քանակը պակսեց, թոքերի մէջ անյայտացան տեղական երևոյթները և այլն:

Յաջող բժշկութեան օրինակներ եղան և այսպէս կոչուած վիրաբուժական կամ ոսկրային տուբէրկուլեօզի,

որ յամառութեամբ բժշկութեան չէր ենթարկուում: Այս հիւանդների էլ դրութիւնը զգալի կերպով լաւացաւ նոր դեղի մի քանի սրսկումից յետոյ:

Այս բոլոր դիպուածներում տեղի ունեցած փայլուն հետեանքները զեկուցողները բացատրում են նոր դեղի մէջ տեղի ունեցող փոխազդեցութեամբ մէկ կողմից մանիշի, միւս կողմից՝ ըաղիի, որի հզօր ներգործութիւնը տարածուում է ոչ միայն տուբէրկուլեօզների բացիլլների վրայ, այլ և այն բացիլլների, որոնք սովորաբար գտնւում են տուբէրկուլեօզի հետ: Անշուշտ ըաղիին անփնաս է դարձնում ներանց թոյնն էլ—տօկսինները, որոնք նրանց հեռացնում են և որոնք աւելի վտանգաւոր են յօրինուածքի համար, քան իրանք բացիլլները: Բայց այս 'ի հարկէ դեռ վերջնական հաստատութեան կարօտ է:

Բ. ԽԼԻՐԴԻ (РАКЪ) ԲԺՇԿՈՒԹԻԻՆԸ

Մանուշակը, մեր դաշտային մանուշակը, համեմատութեան նշանակը, որ շատ հազիւ է գործ դրւում ժամանակակից բժշկականութեան մէջ, այժմ կարևոր տեղ կզբաւէ խլիրդի բժշկութեան մէջ, որ մինչև այժմ համարւում էր անբուժելի մի հիւանդութիւն: Անգլիական բժշկական մի խոշոր թերթ «The Lancet» հետեւեալ ցնցող փաստն է հաղորդում.

Մի պարոն, 53 տարեկան, որ կոկորդի խլիրդ ունէր, քննութեան ենթարկուեց անգլիական բժշկական աշխարհում հռչակուած երեք վիրաբույժների կողմից. բժիշկները եկան այն եզրակացութեան, որ անհրաժեշտ է նրան անմիջապէս անդամահատել: Բայց հիւանդն արհամարհելով իր շրջապատողների խորհուրդը, ժողովրդական միջոցների դիմեց:

Մի պառաւի խորհրդով նա դաշտ գնաց, մանուշակի մի քանի գրվ. տերևներ քաղեց, 24 ժամ ջրի մէջ դրջեց, յետոյ եռցրեց $\frac{1}{4}$ ժամ շարունակ: